Ապրիլի 10, 2017թ.

Պրն Վարդան Արամյանին
Ֆինանսների նախարար
Ֆինանսների նախարարություն
Երևան, 0010, Մելիք-Ադամյան 1
Հայաստանի Հանրապետություն

Հարգելի՝ պարոն Արամյան,

Վարկ 2729-ARM: Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր-Ծրագիր 2,
Վարկ 2993-ARM: Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր-Ծրագիր 3
Փոփոխություններ Վարկային համաձայնագրերում

1. Սույնով հղում ենք կատարում՝ ա) 2011 թվականի մայիսի 30-ով թվագրված՝ Հայաստանի Հանրապետության (Վարկառու) և Ասիական զարգացման բանկի (ԱԶԲ) միջև Վարկային համաձայնագրին (ընթացիկ գործառնություններ), («Ծրագիր 2 Վարկային համաձայնագիր»)՝ Վարկ հմ. 2729 Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր-Ծրագիր 2-ի համար, և բ) 2014 թվականի մարտի 11-ով թվագրված՝ Վարկառուի և ԱԶԲ-ի միջև Վարկային համաձայնագրին (ընթացիկ գործառնություններ), («Ծրագիր 3 Վարկային համաձայնագիր»)՝ Վարկ հմ. 2993 Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր-Ծրագիր 3-ի համար:

2. Ի պատասխան ՀՀ փոխվարչապետի նամակների, որոնք երկուսն էլ թվագրված են 2016 թ. մայիսի 25-ով, ԱԶԲ-ն 2017 թ. ապրիլի 6-ին հաստատել է Ծրագիր 2 Վարկային համաձայնագրի փակման ամսաթվի երկարաձգումը 27 ամսով և Ծրագիր 3 Վարկային համաձայնագրի փակման ամսաթվի երկարաձգումը 21 ամսով: Սույն փոփոխություններն արտացոլելու նպատակով առաջարկում ենք Վարկային համաձայնագրերը փոփոխել, ինչպես սահմանված է ստորև:

Ա. Ծրագիր 2 Վարկային համաձայնագրի 3.05-րդ բաժնում «2017 թ. հունիսի 30» ամսաթիվը հանվում է և փոխարինվում «2019 թ. սեպտեմբերի 14» ամսաթվով:

Բ. Ծրագիր 3 Վարկային համաձայնագրի 3.05-րդ բաժնում «2017 թ. դեկտեմբերի 31» ամսաթիվը հանվում է և փոխարինվում «2019 թ. սեպտեմբերի 14» ամսաթվով:

3. Բացառությամբ վերոնշյալ փոփոխությունների՝ Վարկային համաձայնագրերը մնում են անփոփոխ:

4. Համաձայն ԱԶԲ-ի՝ տեղեկատվության բացահայտման և փոխանակման վերաբերյալ Հանրային հաղորդակցման քաղաքականության (ՀՀՔ)՝ Վարկային համաձայնագրերի փոփոխությունները կհրապարակվեն ԱԶԲ-ի ինտերնետային կայքում՝ փոփոխությունների ուժի մեջ մտնելու ամսաթվից հետո՝ 2 շաբաթվա ընթացքում, ՀՀՔ բացառություններին առնչվող ցանկացած տեղեկատվություն հանելուց հետո:

5. Խնդրում ենք նշել Վարկառուի համաձայնությունը սույն նամակ-համաձայնագրի 2-րդ կետով սահմանված փոփոխություններին և սույն նամակ-համաձայնագրի պայմաններին՝ ստորև նշված տեղում ստորագրելով սույն նամակ-համաձայնագրի երկու բնօրինակները: Խնդրում ենք պահել սույն նամակ-համաձայնագրի ստորագրված մեկ բնօրինակը, իսկ մյուսը վերադարձնել ԱԶԲ-ին: Առաջարկվող փոփոխություններն ուժի մեջ կմտնեն այն ամսաթվին, երբ ԱԶԲ-ն ստանա սույն նամակ-համաձայնագրի ստորագրված մեկ բնօրինակը դրանց ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ բոլոր իրավական գործընթացների ավարտի մասին Վարկառուի ծանուցման հետ միասին:

Հարգանքով՝
Շոն Օ՚Սուլիվան
Գլխավոր տնօրեն
Կենտրոնական և Արևմտյան Ասիայի վարչություն

Ա. Ընդունված և համաձայնեցված է:

Բ. Հաստատված է, որ Ծրագիր 2 վարկային համաձայնագրի և Ծրագիր 3 վարկային համաձայնագրի փոխությունները չեն պարունակում տեղեկատվություն, որը հակասում է ՀՀՔ բացառություններին:

Վարկառուի կողմից և անունից
Կողմից՝
Անուն՝ Վարդան Արամյան
Պաշտոն՝ ՀՀ ֆինանսների նախարար
Ամսաթիվ՝ 24.05.2017